

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՍՏԱՏԱՐԱՆ

**ԴԱՎԵՅԱՆ ՍԵՎԱԿ ՀՐԱՄԻԿԻ**

**ՁՐԱՓՈԽԱՍՎԿՈՒՄԸ ԱԵՐԱՑԻԱՅԻ ԵՎ ԳՐՈՒՏԱՅԻՆ ՁՐԵՐԻ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ  
ՈՒՂԱՋԻԳ ԴՐԵՆԱԺԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՖՈՆԻ ՎՐԱ**

Զ.01.01. «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, ագրոքիմիա»  
մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՎԱԿ ՀՐԱՄԻԿԻ**

**ԵՐԵՎԱՆ – 2015**

---

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ  
АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙ АГРАРНЫЙ УНИВЕРСИТЕТ АРМЕНИИ

**ДАВЕЯН СЕВАԿ ГРАЧИКОВИЧ**

**ВОДНЫЙ ОБМЕН В ЗОНАХ АЭРАЦИИ И ГРУНТОВЫХ ВОД НА ФОНЕ  
ВЕРТИКАЛЬНОГО ДРЕНАЖА**

**АВТОРЕФЕРАТ**

диссертации на соискание ученой степени кандидата технических  
наук по специальности 06.01.01. «Общее земледелие, почвоведение, агрохимия»

**ԵՐԵՎԱՆ – 2015**

Աստենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդում:

**Գիտական ղեկավար՝**

տեխնիկական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր՝ **Ս.Մ.ՂԱԶԱՐՅԱՆ**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

տեխնիկական գիտությունների դոկտոր՝  
**Ն.Լ.ՄԵԼԻՔՅԱՆ**

տեխնիկական գիտությունների թեկնածու,  
դոցենտ՝ **Ն.Գ.ԱԼՈՅԱՆ**

**Առաջատար կազմակերպություն՝**

«Հայցրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ

**Պաշտպանությունը կայանալու է 2015 թ.-ի դեկտեմբերի 2-ին ժամը 14<sup>00</sup>-ին  
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 011 (Ագրոնոմիա) մասնա-  
գիտական խորհրդի նիստում:  
Հասցեն՝ 0009, ք. Երևան, Տերյան 74 (1 մասնաշենք, 425 լսարան):**

Աստենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գրադարանում:

Սեղմագիրին կարելի է ծանոթանալ ՀԱԱԴ պաշտոնական կայքում [www.anau.am](http://www.anau.am)  
Սեղմագիրն առաքված է 2015 թ.-ի նոյեմբերի 2-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական  
քարտուղար, գյուղ. գիտ. թեկնածու, դոցենտ՝  
ԱՎԱԳՅԱՆ**

**Գ.Կ.**

---

Тема диссертации утверждена на ученом совете Национального аграрного университета Армении

**Научный руководитель:**

доктор технических наук, профессор  
**С.М. КАЗАРЯН**

**Официальные оппоненты:**

доктор технических наук

**Н.Л. МЕЛИКЯН**

кандидат технических наук, доцент

**Н.Г. АЛОЯН**

**Ведущая организация:**

ЗАО «Армводпроект институт»

**Защита диссертации состоится 2-го декабря 2015 г. в 14<sup>00</sup> часов на заседании специализированного совета 011 (Агрономия) Национального аграрного университета Армении по адресу: 0009, г. Ереван, ул. Теряна 74 (I корпус, 425 аудитория).**

**С авторефератом можно ознакомиться на официальном сайте НАУА [www.anau.am](http://www.anau.am)**

**С диссертацией можно ознакомиться в библиотеке Национального аграрного университета Армении.**

**Автореферат разослан 2-го ноября 2015 г.**

**Ученый секретарь специализированного**

ԱՇԽԱՏԱՍՔԻ ԸՆՐ ՈՒՐ ԲՆՈՒԹՅԱԳԻՐԸ

**Աշխատանքի արդիականությունը**՝ Այսօգելի հողատարածությունների մեջիրատիվ վիճակը անմիջական ազդեցություն է թողնում գյուղատնտեսական մշակաբույսերի աճի և զարգացման վրա: Այդ նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ է դիտարկել հողում ջրափոխանական խնդիրը և տալ այնպիսի լուծումներ, որոնք կնպաստեն մշակաբույսերից առավելագույն բերքի ստացմանը, ինչը գյուղատնտեսության զարգացման հիմնական գրավականն է:

Աստեղաբառությունում դիտարկվում է աէրացիայի գոտում ջրափոխանական եզրային խնդիրը ուղղաձիգ դրենաժի աշխատանքով՝ հաշվի առնելով մակերեսային ջրերի հմֆիլտրացիան: Միաժամանակ քննարկվում է գրում-տային ջրերի մակարդակի փոփոխման խնդիրը՝ կախված աէրացիայի գոտում ջրափոխանական գործընթացից:

Նշված խնդիրները առավելապես արդիական են Արարատյան հարթավայրի համար, որոնց լուծումը հնարավորություն կտա կարգավորելու գործուստային ջրերի ռեժիմները հողերի աղակալման, գերխոնավացման և ճահճացման գործընթացները կանխելու նկատառումներով:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտման նպատակը ուղղվելի հողատարածություններում ջրափոխանական խնդիր ուսումնասիրությունն է և դրա լուծումը՝ հաշվի առնելով մակերեսային ջրերի հմֆիլտրացիան: Աստեղախսոսական աշխատանքում դիտարկվել են հետևյալ խնդիրները:

- Ինֆիլտրվող ջրերի թափանցումը աէրացիայի գոտի: Այստեղ դիտարկվել է ջրափոխանական գործընթացի մաթեմատիկական արտահայտությունը՝ դիֆերենցիալ հավասարման տեսքով, նրա եզրային պայմանների սահմանումը և ինտեգրումը, արդյունքների ներկայացումը ենալիկ բանաձեռով:
- Գրումտային ջրերի մակարդակի փոփոխումը կախված աէրացիայի գոտում ջրափոխանական գործընթացից: Այդ գործընթացը ներկայացված է դիֆերենցիալ հավասարումների տեսքով՝ իր սահմանային պայմաններով: Դիֆերենցիալ հավասարումների լուծման արդյունքները գնահատված են՝ կախված ֆիլտրացիոն միջավայրից ջրահաննան ռեժիմներից:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտման օբյեկտ համուսանում է Արարատյան հարթավայրը, որտեղ գրումտային ջրերի մակարդակը բարձր է: Այստեղ գրումտային ջրերը ստորերկրյա ճնշումային շերտերի ջրերի և մակերեսային ջրերի հետ գտնվում են հիդրավիկական կապի մեջ համապատասխանաբար ճնշումային ջրերի վերհսուռով և ինֆիլտրացիայով:

**Հետազոտության գիտական նորույթը:** Հետազոտության գիտական նորույթը համարվում է.

- Աէրացիայի և գրումտային ջրերի գոտիներում ջրափոխանական եզրային խնդիր լուծումը բազմաշերտ ֆիլտրացիոն միջավայրում տեղադրված ուղղաձիգ դրենաժի աշխատանքի ֆոմի վրա,

- Ինֆիլտրացիոն սննման մոդուլի որոշումը՝ կախված ստորերկյա ջրերի ջրհանձնան ռեժիմներից, որոնք ընդհանուր առմանը ներկայացված են հատուկ բլոկ-սխեմայով և լուծման ալգորիթմական ծրագրով,
- Ջրահջեցումից կախված ինֆիլտրացիոն մոդուլի որոշման համար նոր էնպիրիկ բանաձևերի ստացումը՝ կախված մակերեսային և ստորերկյա ջրերի սնումից:

**Դետացուության մերուները:** Բազմաշերտ ֆիլտրացիոն միջավայրից տարրեր ռեժիմներով ջրհանձնան դեպքում աերացիայի և գրունտային ջրերի գոտիներում ջրափոխանակման խնդրի լուծման համար կիրառվել են մաքենատիկական մոդելավորման սկզբունքները:

**Դետացուության գործնական նշանակությունը:** Ատենախոսական աշխատանքում կատարվել է ոռոգելի հողերում ջրափոխանակման խնդրի դիտարկում և առաջարկվել է այդ խնդրի մաքենատիկական լուծումներ, որոնք հնարավորություն են տալիս՝

- Կատարել աերացիայի գոտում ջրափոխանակման խնդրի հաշվարկը և որոշել մակերեսային ջրերի ինֆիլտրացիոն սննման մոդուլի մեծությունը և նրա ազդեցությունը գրունտային ջրերի մակարդակի վրա,
- Տարբեր հիդրոերկրաբանական պայմանների դեպքում տրված ելակետային տվյալների համար որոշել գրունտային ջրերի մակարդակի իջեցումները՝ կախված աերացիայի գոտում ջրափոխանակման մեծությունից և ուղղաձիգ դրենաժով ջրհանձնան ռեժիմներից:

**Դրաստարակված գիտական աշխատանքները:** Կատարված աշխատանքների մասին գիտական գեկուցումներ են ներկայացվել ՀԱԱՀ միջազգային կոնֆերանսների շրջանակներում Դիդրոմելիորացիայի, հողաշխարհության և հողային կադաստրի ֆակուլտետում կազմակերպված գիտաժողովներում: Ատենախոսական թեմայի շրջանակներում հրատարակվել են 6 գիտական հոդված:


**Աշխատանքի կազմը և ժամանքը:** Ատենախոսական աշխատանքը շարադրված է 150 էջերի վրա ներայալ հավելվածները: Այն բաղկացած է աշխատանքի ընդհանուր բնութագրից, չորս գլուխներից, եզրակացությունից և առաջարկություններից, գրականության ցանկից և հավելվածներից: Նյութը ներկայացված է 22 աղյուսակներով և 18 մկարներով: Գրականության ցանկում բերված են 117 աղյուր:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՍՏԱՌ ԲՈՎԱՍՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Առաջին գիշում** ներկայացված է հողագրունտներում ջրափոխանակման գործընթացների ընթանուր բնութագրի ուղղաձիգ դրենաժի ֆոնի վրա:

**Պարագորաֆ 1.1-ում** կատարված է հողագրունտներում ջրափոխանակման ուսումնասիրության գրականության համառոտ ակնարկ: Ոռոգելի զանգվածը ներկայացված է որպես ագրոէկոհամակարգի և հասարակական-արտադրական համակարգերի առանձին բաղադրիչ: Կազմվել է ագրոէկոհամակարգում ընթացող գործընթացների կառավարումը նկարագրող բլոկ-սխեման: Նշվել են այն 4 հիմնական խնդիրները, որոնք ընկած են ոռոգելի զանգվածի ուսումնասիրությունների հիմքում: Միաժամանակ քննարկվում են ագրոէկոհամակարգի այն հնարավոր փոփոխությունները, որոնք կապված են ոռոգման համակարգերի ստեղծման և օգտագործման հետ: Կազմվել է ոռոգելի հողատարա-

Ժություններում ջրափոխանակման նմանակման դինամիկ նորդելի բլոկ-սխեման ուղղաձիգ դրենաժի աշխատանքով (Նկ.1): Այն բաղկացած է 2 հիմնական հատվածներից: Առաջին մասը պատկերում է հողում ջրափոխանակման դինամիկ նորդելու ուղղաձիգ դրենաժի ֆոնի վրա: Երկրորդ մասը ցույց է տալիս ջրափոխանակման ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և հնարավորություն է տալիս վերլուծել ու գնահատել իրականացված միջոցառումների հետևանքները:




Շեստակով, Ֆ.Ս. Բոչեսեր, Ի.Ա. Չարճին, Ա.Կ. Անանյանը, Ս.Ս. Ղազարյանը, Վ.Ս. Մարգսյանը, Ն.Լ. Մելիքյանը, Է.Յ. Խաչատրյանը, Յ.Լ.

հետևանքները: Կատարվել է ուղղաձիգ դրենաժի աշխատանքի հենքի վրա ջրափոխանակման խնդիրների վերաբերյալ առկա գրականության ուսումնասիրություն: Ուղղաձիգ դրենաժներով գրունտային ջրերի ուսումնասիրությամբ զբաղվել են Ս.Կ. Աբրամովը, Ա.Յ. Օլենիկը, Ս.Ֆ. Ավերյանովը, Վ.Ս. Զավարյանը, Ռ.Ս. Բարսեղյանը Գ.Ա. Ալոյանը և ուրիշներ: Ջրափոխանակման խնդիրների ուսումնասիրությամբ առաջինը զբաղվել է Լ.Ա. Ռիչարդսը: Շարունակելով ուսումնասիրությունները Ա.Ա. Կյուտը ստացել է հողում ջրափոխանակման միաշափ խնդրի լուծումը: Դետագյում այս խնդրով զբաղվել են՝ Ի.Կ. Գավիշը, Ն.Ն. Վերիգինը, Ս.Ի. Խարչնկոն, Ս.Մ. Ղազարյանը, Դ.Մ. Կացը, Ա.Ա. Ռոդեն և ուրիշներ:

**Նկ.1. Ոռոգելի հողերում ջրափոխանակման դինամիկ նմանակման նորդելիքսկիմենան ուղղաձիգդրենաժի աշխատանքի ֆոնի վրա**

**Պարագանք 1.2-ում ներկայացվել են Արարատյան հարթավայրի հիդրոերկրաբանական պայմանները և այդ պայմաններում ստորերկյա ջրերի ծևավորման և տեղաշարժի վրա ազդող հիմնական գործոնները:**



## Նկ.2. Արարատյան հարթավայրի հիդրոերկրաբանական կտրվածքի պարզեցված սխեման

Կազմվել է հարթավայրի հիդրոերկրաբանական կառուցվածքի պարզեցված ընդհանրացումը, որտեղ առանձնացված են այն հիմնական հշվածքները և բարձրացումները, որոնք ձևավորում են Արարատյան արտեզյան ավազանը (Նկ.2): Արարատյան հարթավայրը շնորհիվ իր օքաղեցորած դիրքի համարվում է փակ միջեղենային արտեզյան ավազան հանդես գալով որպես գրունտային և ստորերկրյա ջրերի բեռնաբանման և կուտակման վայր: Այստեղ առանձնացվում են 3 ջրատար հորիզոններ՝ գրունտային ջրերի գոտին և երկու ճնշումային ջրատար հորիզոնները (Ձերքին և Վերին ճնշումային), որոնք միմյանցից բաժանված են թույլ ջրաբահանցելիություն ունեցող կավային շերտով:

**Պարագորաֆ 1.3-ում** Ստուգված են ջրատար շերտերում ստորերկրյա ջրերի շարժման դիֆերենցիալ հավասարումները և նրանց ձևափոխությունները տարբեր ջրատար հորիզոնների համար: Ջրափոխանակման ակտիվ գոտում դիտվում է գրունտային ջրերի չհաստատված շարժում, քանի որ մակերեսային ջրերի ինֆիլտրացիայի ինտենսիվությունը և գոլորշիացումը մշտապես փոփոխվում են: Բազմաշերտ ֆիլտրացիոն միջավայրում ստորերկրյա ջրերի չհաստատված շարժումը նկարագրող դիֆերենցիալ հավասարումները ստուգված են օգտվելով ջրային հաշվեկշռի ընդհանուր բանաձևից: Առանցքով համաչափ խնդրի դեպքում ջրային հաշվեկշռի հավասարումը կունենա հետևյալ տեսքը.


$$\Delta M = \Delta M_r + \Delta M_{\eta} + \Delta M_{\sigma} + \Delta M_{\varepsilon} \quad (1)$$

որտեղ՝  $\Delta M$  -ը  $V_2$  տարրական ծավալում հեղուկի քանակի փոփոխությունն է ժամանակահատվածում,  $\Delta M_r$ -ը ջրի այն քանակն է, որը նույնը է գործում կամ դուրս է գալիս գլանաձև տարրական ծավալի շառավիղ վեկտորի ( $r$ )ուղղությամբ,  $\Delta M_{\eta}$  և  $\Delta M_{\sigma}$ -ն համապատասխանաբար ստորերկրյա ջրերի այն հոսքերն են, որոնք ներթափանցում են տարրական ծավալ վերևս և ներքև,  $\Delta M_{\varepsilon}$  -ը ջրի այն քանակն է, որը տարրական գլան նույնը է գործում ի հաշիվ մակերեսային ջրերի ինֆիլտրացիայի: Տեղադրելով համապատասխան արժեքները (1) բանաձևում կստանանք հետևյալ արտահայտությունը.

$$\mu^* \frac{\partial H_n}{\partial t} = m_n K_n \left( \frac{\partial^2 H_n}{\partial r^2} + \frac{\partial H_n}{r \partial r} \right) - \frac{\lambda_n}{h_n} (H_n - H_{n+1}) - \frac{\lambda_{n-1}}{h_{n-1}} (H_n - H_{n-1}) \pm \varepsilon \quad (2)$$

որտեղ՝  $K_n$ -ը համապատասխան ճնշումային ջրատար շերտերի ֆիլտրացիայի գործակիցներն են,  $m_n$ -ը տվյալ ջրատար շերտերի հզրություններն են,  $H_n$ -ը այեղումնետրիկ ճնշումն է,  $\mu^*$ -ը առաձգական ջրատվության գործակիցն է,  $\lambda_n$ -ը երկու ճնշումային ջրատար հորիզոնները բաժանող շերտի ֆիլտրացիայի գործակիցն է,  $\varepsilon$ -ը մակերեսային ջրերի հնֆիլտրացիայի մեծությունն է: Հավասարման աջ կողմի առաջին անդամը արտահայտում է գլանի տեսք ունեցող տարրական ծավալի շառավիղ վեկտորի ուղղությամբ մուտք գործող և դուրս եկող ստորերկրյա ջրերի ծավալների տարրերությունը: Աջ կողմի երկրորդ և երրորդ անդամները հրենցից ներկայացնում են ջրի այն ծավալները, որոնք ներթափանցում են ուսումնասիրվող ծավալի վերին և ներքին ջրատար հորիզոններից քոյլ ջրաքական շերտով միավոր ժամանակի ընթացքում: Չորրորդ անդամը արտահայտում է ջրի այն քանակությունը, որը ներթափանցում է ուսումնասիրվող շերտ մակերեսային ջրերի հնֆիլտրացիայի հետևանքով: Հավասարման ձախ մասը ցոյց է տալիս տարրական գլանի ծակուտկեն միջավայրի ծավալի ավելացումը կամ փոքրացումը, որը տեղի է ունենալ ի հաշիվ մուտք գործող և դուրս եկող ջրերի ծավալների փոփոխության:

Նկ.3-ում պատկերված հիդրոերկրաբանական կտրվածքի համար, որտեղ առկա են երկու ճնշումային ջրատար հորիզոններ և մեկգործնական ջրերի հորիզոն, ստորերկրյա ջրերի շարժումը նկարագրվում է երեք հավասարումներով, որոնք ստացվում են (2)-ից: Վերին ճնշումային ջրատար հորիզոնի համար գրունտային ջրերի շարժման (2) հավասարման աջ կողմի չորրորդ անդամը անտեսվում է, քանի որ այն նկարագրում է մակերեսային ջրերի հնֆիլտրացիան վերին ծածկող շերտում:



### Նկ.3. Ջրատար շերտերի կտրվածքը ուղղաձիգ դրենաժի ֆոնի վրա

Բանաձևի մեջ ներմուծելով վերին ճնշումային ջրատար շերտը բնութագրող հիդրոերկրաբանական պարամետրերը կարող ենք գտել.

$$\frac{\partial S_1}{\partial t} = a_1 \left( \frac{\partial^2 S_1}{\partial r^2} + \frac{\partial S_1}{\partial r \partial t} \right) - b_1 (S_1 - S_2) - b_1^* (S_1 - S_0) \quad (3)$$

Ներքին ճնշումային ջրատար հորիզոնի համար (2) հավասարման աջ կողմի երկրորդ և չորրորդ անդամները հաշվի չեն առնվում, քանի որ ներքին ճնշումային ջրատար շերտը համարվում է անջրանցիկ և բացի այդ բացակայում է երրորդ ջրատար հորիզոնը: Նույն կերպ (2) հավասարման մեջ ներմուծելով ներքին ճնշումային ջրատար շերտը բնութագրող հիդրոերկրաբանական պարամետրերը՝ կտանանք ջրատար այդ շերտում ստորերկրյա ջրերի շարժումը նկարագրող հետևյալ արտահայտությունը.

$$\frac{\partial S_2}{\partial t} = a_2 \left( \frac{\partial^2 S_2}{\partial r^2} + \frac{\partial S_2}{\partial r} \right) - b_2 (S_2 - S_1) \quad (4)$$

Վերին ծածկող շերտում դիտվում է գրունտային ջրերի անժնշում շարժում ազատ մակերևույթով: Ընդունելով, որ ծածկող շերտի ֆիլտրացիայի գործակիցը շատ անգամ փոքր է վերին ճնշումային հորիզոնի ֆիլտրացիայի գործակցից, կարելի է եզրակացնել, որ ջրի շարժումը տեղի է ունենում ուղղաձիգ ուղղությամբ: Ջրատար այս շերտի համար կատացվի.

$$\partial S_0 / \partial t = b_0 (S_1 - S_0) - e \quad (5)$$

Ստացված (3), (4) և (5) դիֆերենցիալ հավասարումները նկարագրում են ստորերկրյա ջրերի չհաստատված շարժումը վերին ճնշումային, ներքին ճնշումային և վերին ծածկող ջրատար հորիզոններում:

**Երկրորդ գիտում** դիտարկվել են ջրախցեցման հաշվարկները՝ կախված ուղղաձիգ դրենաժով ջրհանման ռեժիմներից:

**Պարագորաֆ 2.1-ում** կատարվել են ջրախցեցման հաշվարկները ճնշումային երկու ջրատար հորիզոններից միաժամանակ ջրհանման պայմաններում:

ճնշումային երկու ջրատար շերտերը իրարից բաժանված են թույլ ջրաթափանցելիություն ունեցող կավային շերտով և միջյանց հետ գտնվում են հիդրավլիկական կապի մեջ (նկ.3): Ուղղաձիգ դրենաժով ճնշումային երկու ջրատար շերտերից միաժամանակ ջրհանման պայմաններում ստորերկրյա ջրերի մակարդակի իջեցման հաշվարկների համար ընդունենք, որ ճնշումները ջրատար շերտերում տարրեր են, իսկ ուղղաձիգ դրենաժոց ջրի գումարային ելքը հաստատուն մեծություն է:  $Q_1(t) + Q_2(t) = Q = \text{const}$ :

Ջրախցեցման հաշվարկների համար սահմանվել են հետևյալ սկզբնական և եզրային պայմանները.

$$S_i(r,t) = 0, \text{երբ } t = 0 \quad (i = 0, 1, 2) \quad S_i(r,t) = 0, \text{երբ } r > 0 \quad r \rightarrow \infty$$

$$\lim_{r \rightarrow \infty} r(\partial S_i / \partial r + T_i \partial S_i / \partial t) = -Q / 2\pi T = \text{const}, \text{երբ } t > 0 \quad (6)$$

որտեղ՝  $S_i(r,t)$ -ն ջրախցեցման արժեքներն են  $i = 0, 1, 2$  դեպքներն,  $Q$  -ն գումարային ելքն է,  $T_1$  և  $T_2$  -ը համապատասխանաբար վերին և ներքին ճնշումային ջրատար շերտերի ջրահաղողականություններն են: Նշված պայմանների դեպում (3), (4) և (5) դիֆերենցիալ հավասարումների համար կիրառելով օպերացիոն հաշվարկման մեթոդները՝ կստանանք.

$$\begin{aligned} a_1 \left( \bar{S}_1 + 1/r \bar{S}'_1 \right) - \left( p + b_1 + b_1^* \right) \bar{S}_1 + b_1 \bar{S}_2 + b_1^* \bar{S}_0 &= 0 \\ a_1 \left( \bar{S}_2 + 1/r \bar{S}'_2 \right) - \left( p + b_2 \right) \bar{S}_2 + b_2 \bar{S}_1 &= 0, \quad b_0 \bar{S}_1 - \left( p + b_0 \right) \bar{S}_0 = e/p \end{aligned} \quad (7)$$

որտեղ՝  $S(t)$  ֆունկցիան ունի հետևյալ նշանակությունը.  $\bar{S}(p) = \int_0^\infty S(t) \exp(-pt) dt$

(7) հավասարումների համատեղ լուծման արդյունքում ստացվել է ջրատար շերտերի ցանկացած կետում ժամանակի ցանկացած պահին ստորերկրյա ջրերի մակարդակի իջեցման որոշման համար հետևյալ բանաձևը, որտեղ հաշվի է առնված ինֆիլտրացիոն սննումը, երբ ջրհանումը կատարվում է երկու ճնշումային ջրատար շերտերից միաժամանակ.

$$S_i(r,t) = S_{i0}(t) - \frac{Q}{4\pi T} R_i^{(1)}(r,t) - \frac{\Delta H}{4T} T_i R_i^{(2)}(r,t) + \frac{\delta_1}{4T} T_i R_i^{(3)}(r,t) \quad (i=0,1,2) \quad (8)$$

որտեղ՝

$$S_{00}(t) = \frac{(\delta_1 - d_2)e^{-\tau}}{1 - f_1 + d_2} e^{-\tau} + \frac{(k_1 \delta_1 - d_2)e^{-k_1 t}}{k_1^2 (I - k_1)(k_2 - k_1)} + \frac{(k_2 \delta_1 - d_2)e^{-k_2 t}}{k_2^2 (I - k_2)(k_1 - k_2)} - \left( \frac{d_2}{d_1} \tau + \frac{\delta_1 d_1 - d_1 d_2 - f_1 d_2}{d_1^2} \right) - e^{-(I - e^{-\tau})}$$

$$S_{10}(t) = \frac{(k_1 \delta_1 - d_2)e^{-k_1 t}}{k_1^2 (k_2 - k_1)} - \frac{(k_2 \delta_1 - d_2)e^{-k_2 t}}{k_2^2 (k_2 - k_1)} - \left( \frac{d_2}{d_1} \tau + \frac{\delta_1 d_1 - f_1 d_2}{d_1^2} \right), S_{20}(t) = \frac{d_2 e^{-k_1 t}}{k_1^2 (k_1 - k_2)} - \frac{d_2 e^{-k_2 t}}{k_2^2 (k_1 - k_2)} - \frac{d_2}{d_1} \tau + \frac{f_1 d_2}{d_1^2} \quad (9)$$

$\delta_1, f_1, d_1, d_2$ -ը հաստատումներ են, որոնք կախված են ջրատար շերտերի հիդրո-երկրաբանական պայմաններից.

$$\delta_I = B_I^{*0} e, e = \varepsilon G, d_2 = B_2^0 B_I^{*0} e, f_1 = I + B_I^0 + B_I^{*0} + B_2^0, d_1 = B_I^{*0} + B_2^0 + B_I^{*0} B_2^0 \quad (10)$$

τ-ն ժամանակի չափազուրկ մեծությունն է,  $t = b_0 t$ ,  $t$ -ն ջրհանձնան ժամանակամիջոցն է:  $B_1^0, B_2^0, B_1^{*0}$  - ջրատար շերտերը բնութագրող չափազուրկ պարամետրեր են:

$$B_I^0 = b_I/b_0, B_2^0 = b_2/b_0, B_I^{*0} = b_I^*/b_0$$


Τ-ն ջրատար շերտերի գումարյային ջրահաղորդականությունն է:  $T = T_1 + T_2 = k_1 m_1 + k_2 m_2$ ,  $m_1$ -ը և  $m_2$ -ը համապատասխանաբար վերին և ներքին ճնշումային ջրատար շերտերի հզորություններն են,  $\Delta H$ -ը պիեզո-մետրիկ ճնշումների տարրերությունը,  $R_i^{(1)}(r,t)$ ,  $R_i^{(2)}(r,t)$  և  $R_i^{(3)}(r,t)$  - չափազուրկ հիդրավլիկական դիմադրություններն են: Ստացվել են (8) հավասարման ասիմպոտիկ լուծումները ջրհանձնան մեջ ու փորձ ժամանակների համար:

**Պարագորաֆ 2.2-ում** դիտարկվել են ջրահիծեցման հաշվարկները, երբ ջրհանումը կատարվում է միայն ներքին ճնշումային ջրատար շերտից: Ջրահիծեցման հաշվարկների համար սահմանվել են հետևյալ սկզբնական և եզրային պայմանները.

$$S_i(r,t) = 0, \text{եթե } t = 0 \quad (i=0,1,2) \quad S_i(r,t) = 0, \text{եթե } r > 0 \text{ կամ } t > \infty \quad (11)$$

$$\lim_{r \rightarrow r_0} r \left( \frac{\partial S_2}{\partial r} \right) = - \frac{Q_2}{2\pi T_2} = \text{const}, \text{եթե } t > 0 \quad (12)$$

Հաշվարկային սխեման պատկերված է նկ.4-ում.



#### Նկ.4. Ներքին ճնշումային ջրատար շերտից ուղղաձիգ դրենաժով ջրհանձնաման սխեման

ինքնաշատրվանող ջրհորների համար: Դանաձայն այս պայմանի ինքնաշատրվանող ջրհորի ելքը ժամանակի ընթացքում նվազում է էքսպոնենցիալ օրենքով: Լուծելով (7) հավասարումները սահմանված սկզբնական և եզրային պայմանների դեպքում, օգտագործելով օպերացիոն հաշվարկման մեթոդները՝ կարող ենք գրել հետևյալ արտահայտությունները.

$$\bar{S}_1 = c_1 k_0(\omega_1 r) + c_2 k_0(\omega_2 r) + \bar{S}_{10} \quad \bar{S}_2 = c_1 \lambda_1 k_0(\omega_1 r) + c_2 \lambda_2 k_0(\omega_2 r) + \bar{S}_{20} \quad (14)$$

$$\text{որտեղ } \omega_{1,2} = \sqrt{\frac{b_0(a_0\lambda^2 + b\lambda + c \pm f(\lambda))}{2a_2(\lambda+1)}} \quad \lambda_{1,2} = \frac{N\lambda^2 + \gamma_5\lambda + \gamma_6 \mp f(\lambda)}{2A^0 B_1^0 (\lambda+1)}$$

$$c_1 = \mp \frac{Q_2}{2\pi T_2} \frac{1}{\lambda(\lambda+1)}, \quad a_0 = A^0 + 1, \quad b = 1 + B_2^0 + A^0(1 + B_1^0 + B_1^{*0}), \quad \lambda = \rho/b_0,$$

$$N = A^0 - 1, \quad \gamma_5 = A^0(1 + B_1^0 + B_1^{*0}) - (1 - B_2^0), \quad \gamma_6 = A^0 B_1^0 - B_2^0$$

Տեղադրելով համապատասխան արժեքները (14)(14)-ի մեջ (12) պայմանի համար կստանանք ստորեկրյա ջրերի մակարդակի իշեցման որոշման բանաձևը ջրատար շերտի ցանկացած կետում ժամանակի ցանկացած պահին, երբ ջրհանումը կատարվում է միայն ներքին ճնշումային ջրատար հորիզոնից:

$$S_i(r,t) = S_{i0}(t) - Q_2 / 4\pi T_2 R_i^{\mu}(r,t) \quad (15)$$

(13) պայմանի դեպքում կարող ենք գրել.

$$S_i(r,t) = S_{i0}(t) - Q_0 / 4\pi T_2 R_i^{\mu*}(r,t) \quad (16)$$

$R_i^{\mu}(r,t)$ -ն և  $R_i^{\mu*}(r,t)$ -ն չափազուրկ հիդրավլիկական դիմադրություններն են, որոնք ջրհանձնան վիզոք ժամանակամիջոցների համար որոշվում են հետևյալ արտահայտություններով.

$$R_i^{\mu}(r,t) = \frac{A^0 B_1^0 b_0^2}{N} \left( \varphi_0 \left( \frac{r^2}{A^0 a_1}, t \right) - \varphi_0 \left( \frac{r^2}{a_1}, t \right) \right) \quad (17)$$

(12) պայմանը ցույց է տալիս, որ ներքին ճնշումային ջրատար շերտից ջրհանումը իրականացվում է հաստատուն ելքով: Սակայն, եթե ջրհանումը կատարվում է ինքնաշատրվանման միջոցով, այդ պայմանը կարելի է սահմանել (13) արտահայտությամբ:

$$\lim_{r \rightarrow 0} r \left( \partial S_2 / \partial r \right) = -Q_0 e^{-qt} / 2\pi T_2 \quad (13)$$


որտեղ՝  $Q_0$  -ն ջրհորից շատրվանող սկզբնական ելքն է,  $t$ -ն ցուցիչ է, որը ստացվում է փորձնական տվյալների հիման վրա: (13) պայմանը ճիշտ է միայն մեծ ճնշում ունեցող

$$R_I^{\ddot{u}}(r,t) = \frac{A^0 B_I^0 b_0}{N} \left( \varphi_I \left( \frac{r^2}{A^0 a_I}, t \right) - \varphi_I \left( \frac{r^2}{a_I}, t \right) \right), \quad R_2^{\ddot{u}}(r,t) = E_i \left( -\frac{r^2}{4 A^0 a_I t} \right)$$

**Պարագորաֆ 2.3-ում** կատարվել են ջրահջեցման հաշվարկները, երբ ջրիանումը կատարվում է միայն վերին ճնշումային ջրատար շերտից: Ջրահջեցման հաշվարկների համար սահմանվել են հետևյալ սկզբնական և եղրային պայմանները.

$$S_i(r,t) = 0, \text{երբ } t = 0 \quad (i = 0, 1, 2) \quad S_i(r,t) = 0, \text{երբ } t > 0 \quad r \rightarrow \infty \quad (18)(18)$$

$$\lim_{r \rightarrow r_0} r(\partial S_1 / \partial r) = -Q_1 / 2\pi T_1 = \text{const}, \text{երբ } t > 0 \quad (19)(19)$$



#### Նկ.5. Վերին ճնշումային ջրատար շերտից ուղղաձիգ դրումաժով ջրիանման սխեման

Վում են (21) արտահայտություններով:

$$R_O^{\ddot{u}}(r,t) = b_0 \varphi_I \left( \frac{r^2}{a_I}, t \right), \quad R_I^{\ddot{u}}(r,t) = E_i \left( \frac{r^2}{4 a_I t} \right), \quad R_2^{\ddot{u}}(r,t) = \frac{B_2^0 b_0}{N} \left( \varphi_I \left( \frac{r^2}{A^0 a_I}, t \right) - \varphi_I \left( \frac{r^2}{a_I}, t \right) \right) \quad (21)$$

$S_{i0}(t)$ -ն  $i=0, 1, 2$  դեպքերում ջրիանման փոքր ժամանակների համար որոշվում է հետևյալ արտահայտություններով.

$$S_{00}(t) = -\frac{\delta_I b_0^3 t^3}{6} - \dot{e} b_0 t, \quad S_{10}(t) = -\frac{\delta_I b_0^3 t^3}{6}, \quad S_{20}(t) = -\frac{d_2 b_0^3 t^3}{6} \quad (22)$$

$S_{i0}(t)$ -ն  $i=0, 1, 2$  դեպքերում ջրիանման մեջ ժամանակների համար որոշվում է հետևյալ արտահայտություններով.

$$S_{00}(t) = -\left( \frac{d_2}{d_I} \tau + \frac{\delta_I d_I - d_I d_2 - f_I d_2}{d_I^2} + \dot{e} \right), \quad S_{10}(t) = -\left( \frac{d_2}{d_I} \tau + \frac{\delta_I d_I - f_I d_2}{d_I^2} \right), \quad S_{20}(t) = -\left( \frac{d_2}{d_I} \tau - \frac{f_I d_2}{d_I^2} \right) \quad (23)$$

Ջրահջեցման հաշվարկների կատարման համար կազմվել է համակարգչային ծրագիր C++ ծրագրավորման լեզվով PRSARC HID անվամբ: Ծրագիրը տարբեր հիդրոելեկտրականական պայմանների և ջրիանման ռեժիմների դեպքում հաշվարկում է ջրահջեցման արժեքները:

**Եղողող գիշում** մեկնաբանվում է ոռոգելի հողերում ջրափոխանակման խնդրի ընդհանուր դրվագքը և լուծումները:

**Պարագորաֆ 3.1-ում** դիտարկվել է ալրացիայի և գրունտային ջրերի գոտիներում ջրափոխանակման եղրային խնդիրը:

Օգտագործելով օպերացիոն հաշվարկան մեթոդ՝ ստացված է սոորերկոյա ջրերի մակարդակի իջեցման որոշման բանաձևը ջրատար շերտի ցանկացած կետի համար ժամանակի ցանկացած պահին, երբ ջրիանումը կատարվում է միայն վերին ճնշումային հորիզոնից հաստատում ելքով.

$$S_i(r,t) = S_{i0}(t) - Q_1 / 4\pi T_1 R_i^{\ddot{u}}(r,t) \quad (20)$$

որտեղ չափազուրկ հիդրավլիկական դիմադրությունները որոշ-

Աերացիայի գոտին հողի մակերևույթից մինչև գրունտային ջրերի հորիզոնը եղած տարածությունն է: Այս գոտու հողագրունտները իրենցից ներկայացնում են բարդ անիզոտրոպ ծակոտկեն միջավայր, որտեղ տեղի են ունենում փոխկապակցված քազմաքիչ գործընթացներ: Գրունտային ջրերի գոտին հիդրավլիկական կապի մեջ է գտնվում մակերեսային ջրերի հետ ինֆիլտրացիայի ճանապարհով: Յողագրունտներում ջրափոխանակման խնդրի լուծ-ման ընդհանուր մոտեցումը պահանջում է զանգվածա-փոխանակման գործընթացի դիտարկում բարդ համակարգում ընդգրկելով ջրերի շարժումը բոլոր գոտիներում: Դրանց են Վերաբերում ջրերի շարժումը լրիվ հագեցած գոտում, խոնա-վության շարժումը մասնակի հագեցած գոտում (աերացիայի գոտի), հողի մակերևույթից գոլորշիացումը, բույսերի տրանսպիրացիան և այլն: Նկ.6-ում դիտարկվում է Արարատյան հարթավայրի

#### Նկ.6. Ջրափոխանակման հաշվարկային սխեման աերացիայի գոտում

հիդրոերկրաբանական կտրվածքը: Աերացիայի գոտում ջրափոխանակումը դիտարկվել է միայն ուղղաձիգ ուղղությամբ հողի մակերևույթի և գրունտային ջրերի հորիզոնի (ԳԶՀ) միջև: Այս դեպքում օգտվելով խոնավության ծավալի պահպանման օրենքից և ջրի շարժման ֆիլտրացիայի օրենքից, կունենանք.

$$v = -K \frac{\partial h}{\partial z} \quad (24)$$

որտեղ՝  $K$ -ն ֆիլտրացիայի գործակիցն է,  $\frac{\partial h}{\partial z}$  - ը հիդրավլիկական գրադիենտը,  $h$  – ը հիդրոստատիկական ճնշումն է: Յողի տարրական բարձրությունում ջրի հաշվեկշռի հավասարումը կլինի:

$$\frac{\partial \theta}{\partial t} = - \frac{\partial v}{\partial z} = \frac{\partial}{\partial z} \left( K \frac{\partial h}{\partial z} \right) \quad (25)$$

որտեղ՝  $\theta$  -ն հողի ծավալային խոնավությունն է: Յիդրոստատիկ ճնշման համար կարող ենք գրել՝  $h = \psi + z$ ,

որտեղ՝  $z$ -ը գրավիտացիոն

պոտենցիալն է, հողի

մակերևույթի վրա  $z = 0$ ,  $\psi$ -ն

կապիչար պոտենցիալի

ֆունկցիան է:


(24) –ից և (25) –ից կունենաք՝

$$\frac{\partial \theta}{\partial t} = \frac{\partial}{\partial z} \left( K \frac{\partial (\psi + z)}{\partial z} \right) = \frac{\partial}{\partial z} K \left( \frac{\partial \psi}{\partial z} + \right) \quad (26)$$

(26)-ը աերացիայի գոտում ուղղաձիգ ջրափոխանակության հավասարումն է:

Աերացիայի գոտում առկա են բուսականության արմատներ,

որոնց կողմից կատարվում են ջրի որոշ քանակի կլանում, որը խիստ անհավասարաչափ է: Նշանակելով  $f$ -ով հողում հոսքի ինտենսիվությունը՝ պայմանա-



Վորված բույսերի արմատների կողմից ջրի կլանման հետ՝ (26) հավասարումը կընդունի հետևյալ տեսքը.

$$\frac{\partial \theta}{\partial t} = \frac{\partial}{\partial z} K \left( \frac{\partial \psi}{\partial z} + 1 \right) + f$$

(27)

$\theta$  ( $\psi$ ) և  $K$  ( $\psi$ ) կախվածությունները համարվում են հայտնի հողի յուրաքանչյուր հորիզոններում: Սահմանային պայմանները այդ դեպքում գրունտային ջրերի փոփոխական հորիզոնի և հողի մակերևույթի վրա կլիինեն՝

$$\begin{aligned} \psi &= 0, z = \varphi(r, t) = h_0 - S_0(r, t) \\ K \left( \frac{\partial \psi}{\partial z} + 1 \right) &= E_{in} - E_q - \frac{\partial(\eta\psi)}{\partial t}, \text{ եթե } z = L \end{aligned} \quad (28)$$

որտեղ՝  $\varphi(r, t)$  – ն և  $h_0$  – ն համապատասխանաբար գրունտային ջրերի սահմանի դիրքն է և խորությունը (նկ. 6),  $S_0(r, t)$  – ն գրունտային ջրերի հորիզոնի իջեցումն է, որի մեջությունը որոշվում է կախված ճնշումային ջրատար հորիզոններից ջրառի ռեժիմներից,  $E_{in}$ ,  $E_q$  – հողի մակերևույթի վրա քափող տեղումների և ֆիզիկական գոլորշիացման ինտենսիվություններն են,  $\eta(\psi)$  – ն հաշվի է առնում հողի մակերևույթի վրա հնարավոր ջրակուտակումը ինտենսիվ տեղումների դեպքում, որը գերազանցում է ներծծման արագությանը:

Բույսերի կողմից խոնավության կլանումը նկարագրելու համար ներկայացվել է հետևյալ արտահայտությունը.

$$f(z, t) = E_{in} \frac{\omega(z) \cdot \alpha(z)}{\int_0^{h_k} \omega(z) \cdot \alpha(z) \cdot d(z)} \quad (29)$$

որտեղ՝  $h_k$  – ն արմատների տարածման խորությունն է,  $\omega(z)$  – ը արմատների համեմատական տեսակարար մակերեսն է,  $\alpha(z)$  – ը որոշվում է հետևյալ արտահայտությամբ.

$$\alpha(z) = \begin{cases} 0, \text{եթե } \psi \leq \psi_{\text{ավ}}; \\ \lg \psi_{\text{ավ}} / \psi(x), \text{եթե } \psi_{\text{ավ}} < \psi \leq \psi_{\eta}; \\ \frac{E_{\max} - E_{\min}}{E_{\max}} \frac{\lg(\psi_{\text{ավ}} / \psi_{\eta})}{\lg(\psi_{\eta} / \psi_{\text{ն}})} \lg \frac{\psi}{\psi_{\text{ն}}} + \frac{E_{\min}}{E_{\max}} \lg \frac{\psi_{\text{ավ}}}{\psi_{\eta}}, \text{եթե } \psi_{\eta} < \psi \leq \psi_{\text{ն}}; \\ \frac{E_{\min}}{E_{\max}} \lg \psi_{\text{ավ}} / \psi_{\eta}, \text{եթե } \psi < \psi_{\text{ն}}, \end{cases} \quad (30)$$

որտեղ՝  $\psi_{\eta}$ ,  $\psi_{\text{ավ}}$  – ն ներծծման ճնշման արժեքներն են, որոնք պայմանավորված են համապատասխանաբար դաշտային խոնավունակությամբ ( $\psi_{\eta}$ ) և բույսի աճի խոնավությամբ ( $\psi_{\text{ավ}}$ ),  $\psi_{\text{ն}}$  – նույնը գերխոնավ գոտում, եթե տրանսպիրացիան մոտենում է  $E_{in}$ -ի նվազագույն արժեքին,  $E_{\max}$  – ը տրանսպիրացիայի առավելագույն արժեքն է խոնավության օպտիմալ պայմանների դեպքում:

Գրունտային ջրերի հորիզոնի դրությունը որոշվում է կախված էինֆիլտրացիոն սննդից: Հ-ի մեջությունը իր հերթին կախված է ռադիացիոն հաշվեկշրից, ֆիզիկական գոլորշիացումից, տրանսպիրացիայից, բույսերի

արմատների խորությունից և ԳԶ հորիզոնից: Առանձին ջրհորներից ջրհանձան պայմաններում  $\varepsilon_r$ -ի մեծությունը կարող ենք ստանալ հետևյալ բանաձևը.

$$\boldsymbol{\Sigma}_p = \frac{2 \int_{t_1}^{t_2} \int_0^R \left[ E_{\text{տեղ}} + E_n - E_q - E_u - \int_{\varphi(r,t)}^L dz - \mu \frac{dh}{dt} \right] r dr dt}{R^2(t_2 - t_1)} \quad (31)$$

